հօգևորս և մարմնականս, հանդերձ քաջառողջ կենօք ընդ տիրապարգև գերդաստանաց ձերոց։

«Ողջ լերուք և օրհնեալք յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա և ի մէնջ. Ամէն»։

Ի 25. Հոկտեմ. 1869 ամ

Համար 346.

## Ի ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԷ

### Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Անշուշտ մերազնեայք հոգեկան խնդ բերկրութեամբ ընթերցեալ են սոյն այս Արարատի մէջ՝ Նոր Նախիջևանի Չալթր գիւղի բարեխնամ Հայազգի հասարակութեան արգասաւորուած եռանդուն ջանքն ու գովելի գործունէութիւնքը յիշեալ գիւղին մէջ իրենց ի նորումս յարմարաշէն կանգնեցուցած հոյակապ Հոգևոր — Ծխական Դպրոցի շինուածոյն նկատմամբ։

Այս Դպրոցիս շէնքը կատարելապէս աւարտեցաւ յ8-ն անցեալ Հոկտեմբերի՝ և հետևեալ օրը կատարեցաւ օրհնութեան և բացման հանդէսը ի ներկայութեան տեղական և մասամբ դրացի գիւղական հասարակութեան։ Հրաւիրուած էր աստ նաև անգամ Հոգևորական Կառավարութեան տեղւոյս Նոր — Նախիջևանի բարեկրօն Պօղոս Աւագ քահանայն Խուձեանց և տեղւոյն Ստանովոյ Բրիստավը, յորոց առաջինն զկնի աւարտման հանդիսին համառօտ ու պարզ բանիւք խրախուսեց ու օրհնեց հասարակութիւնը ու Դըպրոցի Հոգաբարձուքը։ Յետ որոյ՝ Հայոց լեզուի ուսուցիչ դպրոցին՝ Պարոն Մարտիրոս Պէճոյեան կարդաց ճառ, որ գրոյս հետ առաքի առ Խմբագրութիւնդ։

Այս տեղ՝ մէկ երևոյթ խոր տպաւորութիւն արաւ շրջակայից վերայ, այն է՝ մէկ մի ելաւ ասաց և վկայեց ալ թէ մեր սոյնօրինակ Դպրոցք չունին չորրորդ կարգի դպրոցաց յատկացեալ արտօնութիւն. առ այս բան նորա թէև ցոյց տրուեցաւ իրեն հրապարակաւ ի Թեմական Վերատեսչէ Հոգևոր — Ծխական դպրոցաց կողմանցս՝ որ և Փոխանորդ Առաջնորդութեան վկայականն՝ Արժանապատիւ Սարգիս վարդապետէն խրկուած հեռագիրը մեր սոյնօրինակ դպրոցաց ունեցած արտօնութեան մասին, սակայն՝ նա դարձեալ կըպնդէր իւրենին վերայ։ Նորա միւս խօսքն ալ այս էր, որ միամիտ գիւղականք յայսմ մասին բոլորովին կխաբուին և ընդ վայր կջանան խրկել իրենց զաւակունքը այսպիսի արտօնութիւն չունեող Դպրոց *)։

Այս իրողութիւնը շատերուն համար բնականապէս հետաքրքրական բան մի էր, թէ որդեօք երկու վկայականներէն որո՞ւն ըսածը շիտակ է։ Միով բանիւ շատ տխուր զգացմունքի ենթարկուեցաւ հասարակութիւնը, ինչպէս որ երևցաւ ինձ **)։

Շատ և շատ ցանկալի է որ այս ամենակարևոր խնդրոյս մասին պէտք եղած տնօրէնութիւնը լինէր։

Օգն. Թեմ. Վերատեսչի Հոգևոր Ծխական Դպրոցաց Հայոց Նոր — Նախիջևանի և շրջակայ Գնչից գիւղերէից

ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՔՍԸՄԱՃԵԱՆՑ.

Ի 26ն Փետր. 1876 ամի,

Ի Նոր — Նախիջևան.

## ՀԱՇԻՒ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ ՀԱՅՈՑ ՇԱՄԱԽԻՈՅ.

### Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ.

Շամախւոյ Օրիորդական վարժարանի Հոգաբարձուք իւրաքանչիւր տարի սովորութիւն ունենալով հաշիւ տալ ուսումնարանի վարչութեան, այս անգամ ևս հաշիւ տուեցին, և այժմ ցանկանալով տարածել ի լուր մեր Ազգայնոց նոյն վարժարանի հաշիւն Ձեր պատուական Ամսագրոյ միջոցաւ, վասն որոյ ուղարկում ենք հաշուեցուցակն ծախուց և մուտից 1875 թուականի, — ընդ սմին և անուանք ընկերութեան թէ անփոփոխ

(*) Այսպիսի ցնորաբանութեանց ուշադրութիւն տալ աւելորդ է, մանաւանդ ի պատեհ ժամանակին պիտի հրատարակուին վանական՝ միջակային եւ ծխական Դպրոցաց մշակեալ եւ ի նորոյ պատրաստեալ կանոնադրութիւնքը, որք աւելի պարզ կյայտնեն իւրեանց շրջանը եւ սահմանը։ Ծ. Խ.

(**) Վկայաբանութիւն գրգռողին համար բաւական է ակնարկել, որ «Ի պտղոյ նոցա ծանիջիք զնոսա»։ Ծ. Խ.